



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ  
БЮЛЛЕТЕНЬ

№ 9

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում  
գետեղված տեղեկությունները  
համարվում են հրապարակված 2011 թվականի սեպտեմբերի 26-ից

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ .....	4, 77
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>	<i>6, 79</i>
<b>ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ .....</b>	<b>9, 82</b>
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>	<i>11, 84</i>
<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....</b>	<b>13, 86</b>
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին .....</i>	<i>15, 88</i>
<b>ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....</b>	<b>16</b>
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին .....</i>	<i>18</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին .....</i>	<i>68</i>
<b>ՑՈՒՑԻՉՆԵՐ .....</b>	<b>69</b>
<b>ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>71</b>
<b>ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ .....</b>	<b>89</b>

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок  
Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

## СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 77
Сведения о выданных патентах.....	6, 79
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	9, 82
Сведения о выданных патентах.....	11, 84
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	13, 86
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	15, 88
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	16
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания .....	18
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	68
УКАЗАТЕЛИ.....	69
СООБЩЕНИЯ.....	71
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	89

## CONTENTS

INVENTIONS.....	4, 77
Information on granted patents.....	6, 79
UTILITY MODELS.....	9, 82
Information on granted patents.....	11, 84
INDUSTRIAL DESIGNS.....	13, 86
Information on registered industrial designs.....	15, 88
TRADE MARKS.....	16
Information on registered trade marks and service marks .....	18
Information on renewal of effect of trademark registration .....	68
INDEXES.....	69
REPORTS.....	71
TWO-LETTER CODES.....	89

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*  
*A գյուտի արտոնագիր*  
*B արտոնագրառունակության մասին եզրակացություն*
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2011.01)** (11) **2546** (13) **A**  
**A01B 3/00**  
 (21) **AM20100014** (22) **04.02.2010**  
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)  
 (72) Կարո Ղուկասի Կարախանյան (AM), Լուսինե Կարոյի Կարախանյան (AM), Կարո Արմենի Պետրոսյան (AM)  
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)  
 (54) **Հորիզոնական-աստիճանական վարի միաիրան գույթան**  
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ լանջերի վրա վարի գույթաններին:

Հորիզոնական-աստիճանական վարի միաիրան գույթանն ունի կախոցի համակարգ, շրջանակ, շրջանակին հողակապով միացված խողովակաձև հեծան, խողովակաձև հեծանին անշարժ միացված իրան, որն ունի աջ և ձախ թևեր՝ հողակապերով միացված կրծքամասին: Իրանը անշարժ միացված է հենածողին, որը խողովակաձև հեծանի հետ կապված է հողակապով: Թևերի ծնիչները կորագիծ են: Գույթանն ունի երկու ձգան, որոնք հենածողի հետ անշարժ միացված իրանի, խողովակաձև հեծանի, աջ և ձախ թևերի հետ միասին կազմում են քառոդակ մեխանիզմներ: Իրանի ուղղաձիգ դիրքը կարգավորում է հորիզոնական հեծանին կինեմատիկորեն կապված ինքնարգելակող ռեդուկտորը: Ուղղաձգությունը կողմնորոշվում է ճոճանակով, որը ազատ հողակապով միացված է հեծանին:

Նվազում է գույթանի զանգվածը, ապահովվում է հողի մշակման բարձր որակը, 2 նկ.:

- (51) **(2011.01)** (11) **2547** (13) **A**  
**C02F 1/00**  
 (21) **AM20100027** (22) **03.03.2010**  
 (71) Մեծյում Լևոնի Երիցյան (AM)  
 (72) Ռայա Ավանեսի Քարամյան (AM), Կիմա

- Հարությունի Մարտիրոսյան (AM), Թերեզա Վազգենի Հայկունի (AM)  
 (73) Մեծյում Լևոնի Երիցյան, 0062, Երևան, Գալշոյան 28, բն. 21 (AM)  
 (54) **Պոլիմեր միներալային սորբենտ**  
 (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիայի բնագավառին, մասնավորապես պոլիմեր միներալային սորբենտներին:

Պոլիմեր միներալային սորբենտը ներառում է համապոլիմեր, լցանյութ և ջուր: Որպես համապոլիմեր ընտրված է ակրիլաթթվի, նրա նատրիումական կամ ամոնիումային աղի, ակրիլամիդի և 1,3-երկալիլամիդիլմեթիլիզոց իանուրաթթվի համապոլիմերը, իսկ լցանյութ՝ ավազ-պեռլիտ խառնուրդը. բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). համապոլիմեր 2,5-15,2, լցանյութ 6,8-15,6, ջուր 78,0-81,9:

Ապահովվում է բարձր ամրությամբ և կլանման ունակությամբ սորբենտի ստացումը:

- (51) **(2011.01)** (11) **2548** (13) **A**  
**C07D 211/00**  
 (21) **AM20100025** (22) **01.03.2010**  
 (71) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ (AM)  
 (72) Աշոտ Սաղիյան (AM), Սլավիկ Դադայան (AM), Արտավազ Պողոսյան (AM)  
 (73) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ, 0056, Երևան, Գյուրջյան 14 (AM)  
 (54) **(S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինաբենզոֆենոնի ստացման եղանակ**  
 (57) Գյուտը վերաբերում է հետերոցիկլիկ միացությունների քիմիային, մասնավորապես՝ (S) - 2 - N - ( N' - բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոնի կատարելագործված եղանակին, որը կիրառվում է որպես օժանդակ քիրալային ռեագենտ ոչ սպիտակուցային a-ամինաթթուների օպտիկական իզոմերների ստացման համար:  
 N-բենզիլպրոլինը ենթարկում են քլորանհիդրիդացման, ստացված N-բենզիլպրոլինի քլորանհիդրիդը ենթարկում են կոնդենսման 2-ամինաբենզոֆենոնի հետ՝ ստանալով (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինաբենզոֆենոնը:

Քլորանհիդրիդացումն իրականացնում են մինչև -20°C ջերմաստիճան սառեցրած մեթիլեն քլորիդի և թիոնիլքլորիդի խառնուրդին՝ N-բենզիլպրոլինի ավելացմամբ: N-բենզիլպրոլինը ավելացնում են չափաբաժիններով, 2-ամինաբենզոֆենոնը վերցնում են փոշու ձևով, իսկ մեթիլեն քլորիդը և թիոնիլքլորիդը վերցնում են 1:1,1 մոլային հարաբերակցությամբ:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում արգասիքի ելքը:

(51) (2011.01) (11) 2549 (13) A  
C22B 7/00

(21) AM20110001 (22) 12.01.2011  
(71) «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ (AM), «Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա» հասարակական կազմակերպություն  
(72) Գուրգեն Մարատի Գուլյան (RU)  
(73) «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ, 0039, Երևան, Բագրատունյաց 70/22 (AM), «Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա» հասարակական կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105, 17 մասնաշենք, սեն. 203 (AM)  
(54) **Մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման եղանակ**  
(57) Գյուտը վերաբերում է մետաղագործությանը, մասնավորապես՝ մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման եղանակին:

Մոլիբդեն պարունակող թափոնները բովում են 550-600°C ջերմաստիճանում, մշակում են 30 %-անոց աղաթթվով, այնուհետև ստացված լուծույթն անջատում են նստվածքից: Աղաթթվով մշակումն իրականացնում են 80°C ջերմաստիճանում, թափոնի և աղաթթվի 1:4 զանգվածային հարաբերակցությամբ, այնուհետև նստվածքից անջատված լուծույթը մշակում են ացետոֆենոնի և տոլուոլի 5:1 ծավալային հարաբերակցությամբ վերցված խառնուրդով՝ 50-55°C ջերմաստիճանում՝ բաղադրամասերի 1:1 ծավալային հարաբերակցությամբ:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում է մոլիբդենի կորզման աստիճանը:

(51) (2011.01) (11) 2550 (13) A  
F16L 55/00

(21) AM20100156 (22) 19.11.2010  
(71) Գուրգեն Ավետիսյան (AM)  
(72) Գուրգեն Ավետիսյան (AM)  
(73) Գուրգեն Ավետիսյան, 3115, Գյումրի, Տիմիրյազևի 32 (AM)  
(54) **Ճնշման տատանումների կայունացուցիչ**  
(57) Գյուտը վերաբերում է խողովակաշար համակարգերում հեղուկի և գազի ճնշման և ծախսի տատանումների կառավարման բնագավառին:

Կայունացուցիչն ունի իրան, իրանի մեջ տեղակայված ծակոտած կենտրոնական խողովակաշար, նրան համառանցք տեղակայված կարճախողովակ, որը մի ծայրով կոշտ ամրակցված է իրանի կողային պատին և բաժանում է իրանի խոռոչը երկու մասի, որոնք իրար հետ հաղորդակցվում են կարճախողովակի ազատ ծայրի և իրանի կողային պատի մեջ առաջացած ճեղքի միջոցով: Կայունացուցիչը լրացուցիչ ունի շարժական միջնորմ, որը տեղակայված է իրանի մեջ՝ կարճախողովակի վրա, կիպ հավում է իրանի ներքին ու կարճախողովակի արտաքին մակերևույթներին: Շարժական միջնորմը կատարված է պտուտակային զույգի միջոցով՝ կարճախողովակի երկարությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ:

Ընդլայնվում է մարող տատանումների հաճախության դիապազոնը, 2 նկ.:

(51) (2011.01) (11) 2551 (13) A  
F42B 10/00

(21) AM20100021 (22) 15.02.2010  
(71) Ասատուր Նիկոլայի Հովսեփյան (AM)  
(72) Նիկոլայ Հովսեփյան (AM), Ասատուր Հովսեփյան (AM)  
(73) Ասատուր Հովսեփյան, 2202, ք. Արովյան, Քանաքեռի 2, բն. 28 (AM)  
(54) **Հրազենային արկ**  
(57) Գյուտը վերաբերում է ռազմական արդյունաբերությանը, մասնավորապես՝ փամփուշտների և արկերի արտադրությանը:

Արկն ունի առնվազն երկու փորվածք ակոսի տեսքով՝ արտաքին մակերևույթի վրա: Փորվածքները տեղակայված են հավասար հեռավորության վրա՝ գլանական տրամաչափարկված մասի վրա: Ակոսները լայնացված են դեպի արկի ետնամասը և սահուն նեղացված ու արկի առանցքի նկատմամբ սուր անկյան տակ, նույն ուղղությամբ ոլորված են դեպի արկի առաջնամասը:

Մեծացվում է հրազենի հեռահարությունը, փոքրացվում է արծակված արկերի ցրումը և հետևաբար մեծանում է թիրախի խոցման ճշտությունը, 1նկ.:

(51) (2011.01) (11) 2552 (13) A  
G01N 33/00

(21) AM20110038 (22) 31.03.2011

(71) Հովհաննես Զավենի Նաղաշյան (AM), Գոհար Սերգեյի Յարալյան (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով (AM)

(72) Հովհաննես Զավենի Նաղաշյան (AM), Գոհար Սերգեյի Յարալյան (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով (AM)

(73) Հովհաննես Նաղաշյան, 0002, Երևան, Մ. Սարյան 33, բն. 34 (AM), Գոհար Սերգեյի Յարալյան, 0047, Երևան, Հին Նորք 66 (AM), Օլեգ Վալերիի Շչերբակով, 0005, Երևան, Տիգրան Մեծի պող. նրբ. 10, բն. 15 (AM)

(54) **Կենսիդոկոպտոզի հարուցիչների հայտնաբերման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ կենսիդոկոպտոզ սեռի տզերի հայտնաբերման եղանակներին:

Թռչունի մաշկի քերուկին ավելացնում են կծու կալիումի 10%-անոց լուծույթ, խառնում են, այնուհետև կենտրոնախուսում են 5 րոպե 1000 պտ/րոպե արագությամբ: Վերնստվածքային հեղուկը հեռացնում են, նստվածքին ավելացնում են 1:1 զանգվածային հարաբերակցությամբ վերցրած կաթնաթթվի և գլիցերինի լուծույթ և ստացված խառնուրդը հետագոտում են մանրադիտակով:

Բարձրացվում է կենսիդոկոպտոզ սեռի տզերի հայտնաբերման արդյունավետությունը, ինչը թույլ է տալիս կանխել վարակի տարածումը:

(51) (2011.01) (11) 2553 (13) A  
G08F 8/00

(21) AM20110059 (22) 17.05.2011

(71) Ռաֆիկ Հակոբի Խաչատրյան (AM), Լիպարիտ Գարեգինի Աթաբեկյան (AM), Վարդան Սարգսի Դանիելյան (AM) Ասյա Սերգեյի Բաբաջանյան (AM)

(72) Ռաֆիկ Հակոբի Խաչատրյան (AM), Լիպարիտ Գարեգինի Աթաբեկյան (AM), Վարդան Սարգսի Դանիելյան (AM), Ասյա Սերգեյի Բաբաջանյան (AM)

(73) Ռաֆիկ Հակոբի Խաչատրյան, 0065, Երևան, Տիգինայի 35 (AM), Լիպարիտ Գարեգինի Աթաբեկյան, 0022, Երևան, Ավան-Առինջ, 1-ին թաղ. 3/7, բն. 17 (AM), Վարդան Սարգսի Դանիելյան, 0072, Երևան, Նորագավիթ, 13-րդ փող. 88 (AM), Ասյա Սերգեյի Բաբաջանյան, 0097, Երևան, Մելքունովի 33, բն. 87 (AM)

(54) **Հաղորդալարն էլեկտրամեկուսիչ և պաշտպանիչ շերտերով պատելու եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է արձնապատ հաղորդալարերի արտադրության բնագավառին:

Հաղորդալարը սկզբից պատում են էլեկտրամեկուսիչ արձնաշերտով, հեռացնում են արձնապատող լաքի ավելցուկը, ենթարկում ջերմամշակման 450-500°C ջերմաստիճանում, ապա արձնապատ հաղորդալարը պատում են երկրորդ պաշտպանիչ շերտով, կրկին հեռացնում են լաքի ավելցուկն և ենթարկում ջերմամշակման: Արձնաշերտով պատելու համար օգտագործում են TC-1 մակնիշի բազմաեթերային խեժի հալույթ, իսկ պաշտպանիչ շերտով պատելու համար՝ 1 : 1 զանգվածային հարաբերակցությամբ վերցրած Յ-41 մակնիշի էպօքսիդային խեժի և N-54 մակնիշի բազմամիդային խեժի խառնուրդի հալույթ:

Բարելավվում են արձնապատ հաղորդալարի մեկուսիչ շերտերի էլեկտրական և մեխանիկական հատկությունները:



**ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

<b>11</b>	<b>արտոնագրի համարը</b>
<b>13</b>	<b>փաստաթղթի տեսակի կոդը</b> <b>U</b> <b>օգտակար մոդելի արտոնագիր</b>
<b>21</b>	<b>հայտի համարը</b>
<b>22</b>	<b>հայտի ներկայացման թվականը</b>
<b>23</b>	<b>ցուցահանդեսային առաջնության թվականը</b>
<b>31</b>	<b>առաջին հայտի համարը</b>
<b>32</b>	<b>առաջին հայտի ներկայացման թվականը</b>
<b>33</b>	<b>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</b>
<b>45</b>	<b>օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը</b>
<b>51</b>	<b>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</b>
<b>54</b>	<b>օգտակար մոդելի անվանումը</b>
<b>56</b>	<b>տեղեկատվության աղբյուրներ</b>
<b>57</b>	<b>օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</b>
<b>62</b>	<b>ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</b>
<b>71</b>	<b>հայտատուն, երկրի կոդը</b>
<b>72</b>	<b>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</b>
<b>73</b>	<b>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</b>
<b>74</b>	<b>արտոնագրային հավատարմատար</b>
<b>85</b>	<b>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը</b>
<b>86</b>	<b>միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը</b>
<b>87</b>	<b>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը</b>

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) (2011.01) (11) 263 (13) U  
**A61B 17/00**  
 (21) **AM20110062U** (22) **27.05.2011**  
 (71) Յուրի Համբարձումի Դադայան (AM)  
 (72) Յուրի Համբարձումի Դադայան (AM)  
 (73) Յուրի Համբարձումի Դադայան, 0002, Երևան, Դ. Դեմիրճյան 29, բն. 33 (AM)  
 (54) **Քթի արյունահոսության դադարեցման սարք**  
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է բժշկական տեխնիկային:

Սարքն ունի ճկուն խցիկի ձև ունեցող տամպոն, խցիկին լցանյութ մատուցող խողովակ, որի ծայրին ամրակցված է խցիկի մեջ ներդրված ուղղորդիչ սնամեջ կաթետեր: Մատուցման խողովակի մյուս ծայրը միացված է ռետինե տանձաձև մղիչին, որը ծառայում է որպես լցանյութի մատուցման աղբյուր:

Ապահովվում է առանց կողմնակի օգնության սարքի օգտագործման հնարավորությունը, 1 նկ.:

- (51) (2011.01) (11) 264 (13) U  
**A63H 33/00**  
 (21) **AM20110067U** (22) **02.06.2011**  
 (71) Արման Հովհաննիսյան (AM)  
 (72) Արման Հովհաննիսյան (AM)  
 (73) Արման Հովհաննիսյան, 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)  
 (54) **Ճանաչողական խաղագիրք**  
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է գիրք-խաղալիքներին, մասնավորապես՝ ժամանցային և ուսուցողական խաղերին և գրքերին:

Ճանաչողական խաղագիրքը կազմավորված է թերթերը հորիզոնական առանցքի շուրջը պտտելու հնարավորությամբ: Խաղագիրքն իրականացված է պատվանդանի և դրա վրա տեղադրված չորս տուփերի տեսքով: Յուրաքանչյուր տուփը բաղկացած է ստորին և վերին հատվածամասերից: Ստորին հատվածամասի վերին հատվածի ներքին մակերևույթը և վերին հատվածամասի ստորին հատվածի արտաքին մակերևույթը բարակացված են: Ստորին հատվածամասի բա-

րակացված հատվածը կատարված է վերին հատվածամասի բարակեցված հատվածի մեջ մտցնելու հնարավորությամբ: Տուփի ստորին և վերին հատվածամասերի բարակացված հատվածների կողային մակերևույթին կատարված են իրար համառանցք միջանցիկ անցքեր, տուփի կողմերից մեկի ստորին և դրա հակադիր կողմի վերին հատվածամասերում կատարված են հանվածքներ: Պատվանդանը իրականացված է հիմքի և դրան միակցված երեք ուղղաձիգ կանգնուկների տեսքով, որի երկու ծայրամասային կանգնուկները ունեն երկու հանդիպակաց վերին և ստորին խուլ անցքեր, իսկ միջանկյալ կանգնուկում արված է երկու միջանցիկ անցք՝ ծայրային կանգնուկների անցքներին համառանցք: Տուփի միջանցիկ անցքերով անցկացված է ձող, որի ծայրամասերը տեղակայված են կից կանգնուկների անցքերի մեջ, ընդ որում տուփը տեղադրված է ձողի շուրջը պտտվելու հնարավորությամբ: Տուփի յուրաքանչյուր 180 °- պտույտի ընթացքում ստորին շարքից մեկ թերթ տեղափոխվում է վերին շարք, իսկ թերթերի ստորին և վերին շարքերը տեղերով փոխվում են, ընդ որում տուփի հաջորդ հանվածքը զբաղեցնում է դիմային դիրք ցուցադրելով գրքի հաջորդ էջը:

Նպաստում է երեխայի հիշողության զարգացմանը, բարձրացնում է ուշադրությունը և հետաքրքրասիրությունը, 13 նկ.:

- (51) (2011.01) (11) 265 (13) U  
**E03D 1/00**  
 (21) **AM20110072U** (22) **17.06.2011**  
 (71) Լևոն Արամի Ջուհարյան (AM), Ալեքսանդր Արամի Ջուհարյան (AM)  
 (72) Լևոն Արամի Ջուհարյան (AM), Ալեքսանդր Արամի Ջուհարյան (AM)  
 (73) Լևոն Արամի Ջուհարյան, 0039, Երևան, Բագրատունյաց 6, բն. 10 (AM) Ալեքսանդր Արամի Ջուհարյան, 0039, Երևան, Բագրատունյաց 6, բն. 10 (AM)

**(54) Պատին ամրակցվող զուգարանակոնքի կոյուղուն միակցման համակարգ**

(57) Պատին ամրակցվող զուգարանակոնքի կոյուղուն միակցման համակարգը ունի պատի հակադիր կողմերում տեղակայված և իրար ամրակցված չորս ամրակցման անցքերով մետաղական հենասալ և այդ անցքերին համապատասխան անցքեր ունեցող զուգարանակոնք, զուգարանակոնքը կոյուղու հետ միակցող հանգույց, զուգարանակոնքի վրա կատարված կոյուղու հետ միակցող հանգույցի համար նախատեսված շրջանաձև բնիկ, հենասալը պատին սևեռող հանգույց: Ձուգարանակոնքը կոյուղու հետ միակցող հանգույցն իրականացված է 12-15մմ կցաշուրթ ունեցող 100-1000մմ երկարությամբ պլաստմասսայե խողովակի տեսքով: Մետաղական հենասալն ունի ստորին մասում խողովակի արտաքին տրամագծին համապատասխան հանվածք: Ձուգարանակոնքի բնիկում տեղադրված է ռետինե շրջանաձև միջադիր, ընդ որում խողովակի կցաշուրթի լայնությունը և երկարությունը համապատասխանում են զուգարանակոնքի վրա կատարված բնիկի չափերին:

Պարզեցվում է պատրաստման տեխնոլոգիան, բարձրանում է միացման հերմետիկությունը և իջնում է ինքնարժեքը, 3 նկ.:

(51) (2011.01) (11) 266(13) Ս  
G01J 1/00

(21) AM20110054U (22) 04.05.2011  
(71) Սերգեյ Գավրիլի Խալպախյան (AM)  
(72) Սերգեյ Գավրիլի Խալպախյան (AM), Ջուլետտա Գերասիմի Վարդանյան (AM), Մանուկ Նեստերի Ներսիսյան (AM)  
(73) Սերգեյ Գավրիլի Խալպախյան, 0069, Երևան, Ռուբինյանց 1ա, բն. 73 (AM)

**(54) Վակուումային ուլտրամանուշակագույն տիրույթի ճառագայթման ընդունիչ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է վակուումային ուլտրամանուշակագույն ճառագայթումների ընդունման ու գրանցման սարքերին և կարող է կիրառվել տիեզերական օբյեկտների, սինքրոտրոնային ճառագայթների ուսումնասիրության համար ինչպես նաև բժշկության, գյուղատնտեսության մեջ, ֆիզիկական հետազոտություններում:

Ընդունիչն ունի հաջորդաբար տեղակայված կիզակետող ու զտող հանգույց, կոնվերտեր, օպտիկաէլեկտրոնային կերպափոխիչ, որին միացված է մշակման և ցուցանշման հանգույց: Որպես կոնվերտեր օգտագործված է սկանդիումով աճեցրած կորունդի միաբյուրեղ:

Բարձրացվում է ընդունիչի զգայունությունը վակուումային ուլտրամանուշակագույն տիրույթում, 4նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**


<b>11</b>	<b>վկայագրի համարը</b>
<b>13</b>	<b>փաստաթղթի տեսակի կոդը</b> <b>S արդյունաբերական նմուշի վկայագիր</b>
<b>21</b>	<b>հայտի համարը</b>
<b>22</b>	<b>հայտի ստացման թվականը</b>
<b>23</b>	<b>ցուցահանդեսային առաջնության թվականը</b>
<b>24</b>	<b>գրանցման թվականը</b>
<b>31</b>	<b>առաջնային հայտի համարը</b>
<b>32</b>	<b>առաջնային հայտի ներկայացման թվականը</b>
<b>33</b>	<b>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</b>
<b>51</b>	<b>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</b>
<b>54</b>	<b>արդյունաբերական նմուշի անվանումը</b>
<b>55</b>	<b>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</b>
<b>71</b>	<b>հայտատուն(ները), երկրի կոդը</b>
<b>72</b>	<b>հեղինակը(ները), երկրի կոդը</b>
<b>73</b>	<b>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</b>
<b>74</b>	<b>արտոնագրային հավատարմատար</b>

## Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

- (51) **09-01** (11) **259** (13) **S**
- (21) **20110007** (22) **28.02.2011**
- (71) «Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ (AM)
- (72) Գրիգոր Ալբերտի Ալեքսանյան (AM)
- (73) «Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ, Երևան, Բազրատունյաց փ., շ. 38 (AM)
- (54) **Գինու շիշ**
- (55)



1.1



1.2

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ**

**ТОВАРНЫЕ ЗНАКИ**



**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

<b>111</b>	<b>գրանցման հերթական համարը</b>
<b>151</b>	<b>գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)</b>
<b>152</b>	<b>թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է</b>
<b>181</b>	<b>գրանցման գործողության ենթադրյալ ավարտը</b>
<b>210</b>	<b>հայտի համարը</b>
<b>220</b>	<b>հայտի ներկայացման թվականը</b>
<b>230</b>	<b>ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը</b>
<b>310</b>	<b>առաջին հայտի համարը</b>
<b>320</b>	<b>կոնվենցիայով առաջնության թվականը</b>
<b>330</b>	<b>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</b>
<b>442</b>	<b>հայտի հրապարակման թվականը</b>
<b>511</b>	<b>ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը</b>
<b>526</b>	<b>չպահպանվող տարրեր</b>
<b>540</b>	<b>ապրանքային նշանը</b>
<b>551</b>	<b>կոլեկտիվ կամ հավաստագրային նշան</b>
<b>554</b>	<b>ծավալային նշան</b>
<b>555</b>	<b>հոլոգրաֆիական նշան</b>
<b>556</b>	<b>ձայնային նշան</b>
<b>591</b>	<b>գույնը և գունային համակցությունը</b>
<b>646</b>	<b>իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը</b>
<b>730</b>	<b>նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը</b>
<b>740</b>	<b>արտոնագրային հավատարմատար</b>

## Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20101325**  
(220) **16.09.2010**

(111) **17306**  
(151) **02.08.2011**  
(181) **16.09.2020**

(730) «Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ»  
ՍՊԸ, ք. Արարատ, Պուշկինի 12, AM

(442) 06.10.2010  
(540)



(511) դաս 29. պահածոյացված, չորացված, սառեցված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ, տոմատի մածուկ.

դաս 32. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ:

(210) **20101447**  
(220) **14.10.2010**

(111) **17307**  
(151) **02.08.2011**  
(181) **14.10.2020**

(730) «Էկոֆուդ» ՍՊԸ, Երևան, Ա. Վշտունի 73, AM  
(442) 05.11.2010

(540)



(526) «ECOLOGICALLY PURE PRODUCT» և «MADE IN ARMENIA» արտահայտություններն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է կանաչ և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր:

(210) **20101513**  
(220) **26.10.2010**

(111) **17308**  
(151) **02.08.2011**  
(181) **26.10.2020**

(730) Ղուկասյան Գոհար, Երևան, Վ. Փափազյան փ., 17 շենք, բն. 39, AM


(442) 22.11.2010  
(540)

# ԼՈՒԱՐԱ

(511)

դաս 35. մանրածախ առևտուր:

- (210) **20101795** (111) **17309**
- (220) **09.12.2010** (151) **02.08.2011**
- (181) **09.12.2020**
- (730) «Գրանդ տորակո» հայ-կանադական ՀՁ  
ՍՊԸ, ք. Երևան, Շահամիրյանների 22, AM  
(442) 21.01.2011
- (540)



- (591) Նշանը պահպանվում է կարմրաշագանակագույն, սև, սպիտակ, ոսկեգույն և կարմիր գունային համակցությամբ:
- (511)
- դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի:

- (210) **20101946** (111) **17310**
- (220) **29.12.2010** (151) **02.08.2011**
- (181) **29.12.2020**
- (730) «Հոթել ֆորթին ֆլոր» ՍՊԸ, Երևան, Ամիրյան 4/6, 154 տարածք, AM
- (540)



- (526) «HOTEL» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
- (591) Նշանը պահպանվում է դեղնականաչ, շագանակագույն, սև և դեղին գունային համակցությամբ:
- (511)
- դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

- (210) **20110073** (111) **17311**
- (220) **31.01.2011** (151) **02.08.2011**
- (181) **31.01.2021**
- (730) Ռոսմաքս Ինթերնեյշնլ Լթթ., TW
- (442) 10.03.2011
- (540)



- (511)
- դաս 10. էլեկտրասրտագրիչներ. զարկերակային հաճախականության մոնիտորներ. զարկերակաճնշաչափեր. ջերմաչափեր բժշկական նպատակների համար. ստեթոսկոպներ. փոշարարներ բժշկական նպատակների համար. արյան հետազոտման սարքեր. արյան գլյուկոզի չափիչ սարքեր. մաշկի միջով նյարդի էլեկտրական խթանիչներ. զարկերակային թթվածնաչափեր. բժշկական սարքեր և գործիքներ:
- (740) Ռ. Քալաշյան

- (210) **20110089** (111) **17312**
- (220) **02.02.2011** (151) **02.08.2011**
- (181) **02.02.2021**
- (730) «Գյումրի-գարեջուր» ՍՊԸ, Շիրակի մարզ, Գյումրի, Երևանյան խճուղի 171, AM
- (442) 09.05.2011
- (540)



- (554) Ծավալային նշան
- (511)
- դաս 21. ապակյա շիշ:

(210) **20110094** (111) **17313**  
 (220) **02.02.2011** (151) **02.08.2011**  
 (181) **02.02.2021**

(730) Մեգաֆինֆարմ ԳմբՀ, AT  
 (442) 10.03.2011  
 (540)

# MYRAMISTIN

(511) դաս 3. օժանելիք. կոսմետիկական արտադրանք, այդ թվում լոսյոններ.

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. ախտահանիչ միջոցներ. բակտերիցիդներ, պատրաստուկներ այրվածքները մշակելու համար. հականեխիզ միջոցներ. բուժական միջոցներ բերանի խոռոչի խնամքի համար:

(740) Ալ. Նահապետյան

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ:

(210) **20110371** (111) **17315**  
 (220) **22.03.2011** (151) **02.08.2011**  
 (181) **22.03.2021**

(730) «Վեդի-ալկո» ՓԲԸ, Արարատի մարզ, գ. Գինեվետ, 0627, AM  
 (442) 21.04.2011  
 (540)



*Triple Distilled  
 For  
 Ultimate Purity*



(210) **20110360** (111) **17314**  
 (220) **18.03.2011** (151) **02.08.2011**  
 (181) **18.03.2021**

(730) «Պոնչիկ-մոնչիկ» ՍՊԸ, ք. Գյումրի, Կրուպսկայա փող. տուն 7ա, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



(526) «ՊՈՆՉԻԿ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է կանաչ, կարմիր, դեղին, կապույտ, նարնջագույն, մոխրագույն, սպիտակ, սև և բեժ գունային համակցությամբ:

(511) դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

(526) Բացի «VEDI ALCO» անվանումից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է կարմիր, կապույտ, սպիտակ և սև գունային համակցությամբ:

(511) դաս 33. օղի:

(210) **20110397** (111) **17316**  
 (220) **24.03.2011** (151) **02.08.2011**  
 (181) **24.03.2021**  
 (730) Դը Կոկա-Կոլա Քամփնի, Դելավերի նահանգ, US  
 (442) 09.05.2011  
 (540)



(591) Նշանը պահպանվում է սև, կարմրա-չափանակագույն և սպիտակ գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20110411** (111) **17317**  
 (220) **28.03.2011** (151) **02.08.2011**  
 (181) **28.03.2021**  
 (730) «Ասիկա» ՍՊԸ, Երևան, Այգեձոր, տուն 5, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



(526) «ԻՄՈՐԵՂԵՆ» բառն ինքնուրույն պահապանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է մուգ վարդագույն, բորդո և սպիտակ գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 30. խմորեղեն:

(210) **20110413** (111) **17318**  
 (220) **28.03.2011** (151) **02.08.2011**  
 (181) **28.03.2021**  
 (730) Բրիթիշ Ամերիքն Թբեքոու (Բրենդս) Լիմիթիդ, GB  
 (442) 09.05.2011  
 (310) 40-2010-49873 (320) 28.09.2010 (330) KR  
 (540)

## SUB-ZERO

(511)  
 դաս 34. սիգարետներ. ծխախոտ. ծխախոտային արտադրանք. վառիչներ. լուցկի. ծխելու պիտույքներ:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20110441** (111) **17319**  
 (220) **05.04.2011** (151) **02.08.2011**  
 (181) **05.04.2021**  
 (730) Հայկ Բեգլարյան, Երևան, Ազատության 1-2, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



## Мадатовъ

(591) Նշանը պահպանվում է սև և կարմիր գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 32. գարեջուր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ.  
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

(210) **20110447** (111) **17320**  
 (220) **06.04.2011** (151) **02.08.2011**  
 (181) **06.04.2021**  
 (730) «Այթիմաստեր» ՍՊԸ, Ագարակ 2-րդ փ., 38  
 տուն, Արարատ, AM  
 (442) 09.05.2011  
 (540)




(591) Նշանը պահպանվում է սև, սպիտակ և կարմիր գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 35. համակարգիչների, դյուրակիր համակարգիչների, ցանցային սարքավորումների ներմուծում և վաճառք.  
 դաս 42. համակարգչային ծառայություններ, խորհրդատվություն:

(210) **20110450** (111) **17321**  
 (220) **07.04.2011** (151) **02.08.2011**  
 (181) **07.04.2021**  
 (730) «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն, Երևան, Արմեն Արմենակյան 2/5, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



(526) «Ներդրումներ» և «Investments» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:  
 (591) Նշանը պահպանվում է կարմիր, կապույտ, նարնջագույն և սև գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 36. վարկային գործունեություն:

(210) **20110462** (111) **17322**  
 (220) **11.04.2011** (151) **02.08.2011**  
 (181) **11.04.2021**  
 (730) Էմմա Մանուկյան, Երևան, Դավիթաշեն 1-ին թ/մ, 482., բն. 28, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



**SPANKER**

(511)  
 դաս 25. կոշկեղեն:

(210) **20101716** (111) **17323**  
 (220) **24.11.2010** (151) **08.08.2011**  
 (181) **24.11.2020**  
 (730) «Ագիս թրեյդ» ՍՊԸ, 0084, Երևան, Շերամի 108/3, AM  
 (442) 10.03.2011  
 (540)



(591) Նշանը պահպանվում է կանաչ, կարմիր և կապույտ գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ:

(210) **20101777** (111) **17324**  
 (220) **02.12.2010** (151) **08.08.2011**  
 (181) **02.12.2020**

(730) «Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ, ք. Երևան,  
 Հ. Հակոբյան 3/15, AM  
 (442) 07.02.2011  
 (540)



(526) «CAFE», RESTAURANT» բառերն ինքնուրույն  
 պահպանության օբյեկտներ չեն:  
 (511)

դաս 43. ռեստորաններ, սրճարաններ, հյու-  
 րանոցներ, սննդամթերքով և ըմպելիքներով  
 ապահովման ծառայություններ. ժամանակավոր  
 բնակատեղով ապահովում:

(210) **20101781** (111) **17325**  
 (220) **02.12.2010** (151) **08.08.2011**  
 (181) **02.12.2020**

(730) «Հայկազ և Լուսինե» ՍՊԸ, Աբովյան, 2-րդ  
 միկրոշրջան, 31 շենք, բն. 8, AM  
 (442) 22.12.2010  
 (540)



(554) Ծավալային նշան  
 (511)  
 դաս 21. տարա (շիշ):

(210) **20101785** (111) **17326**  
 (220) **03.12.2010** (151) **08.08.2011**  
 (181) **03.12.2020**

(730) «Գրիգեգոռ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, գյուղ  
 Կամարիս, 3-րդ փող., 1-ին նրբանցք, 2-րդ  
 տուն, AM

(442) 07.02.2011  
 (540)



(591) Նշանը պահպանվում է դեղին, կարմիր,  
 սպիտակ և սև գունային համակցությամբ:  
 (511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական  
 պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ  
 բուժական նպատակների համար. դիետիկ  
 նյութեր բուժական նպատակների համար,  
 մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրա-  
 կապման նյութեր. ատամնալցման և ատամների  
 ծեփապատճեններ պատրաստելու նյութեր.  
 ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների  
 ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ,  
 հերբիցիդներ.

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս.  
 մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված,  
 չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր  
 և բանջարեղեն. դոնդոլ, մուրաբա, կոմպոտ.  
 ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և  
 ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ,  
 տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ.  
 ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց,  
 հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ.  
 մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ.  
 աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք).  
 համեմունք. սառույց.

դաս 31. գյուղատնտեսական, այգեգոր-  
 ծական, անտառային և հացահատիկային  
 մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում.  
 կենդանիներ. թարմ մրգեր և բանջարեղեն.  
 սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ. կեր  
 կենդանիների համար. ածիկ.

դաս 32. գարեջուր. հանքային և գազա-  
 վորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ.  
 մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշա-  
 րակներ և ըմպելիքների պատրաստման այլ  
 բաղադրանյութեր:

(740) Ա. Գալոյան

(210) **20101786** (111) **17327**  
 (220) **03.12.2010** (151) **08.08.2011**  
 (181) **03.12.2020**

(730) «Գրիգեգոռ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, գյուղ  
 Կամարիս, 3-րդ փող., 1-ին նրբանցք, 2-րդ  
 տուն, AM

(442) 07.02.2011

(540)

**КРАСАВИЦА**

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժա-  
 կան պատրաստուկներ. հիգիենիկ պատրաս-  
 տուկներ բուժական նպատակների համար.  
 դիետիկ նյութեր բուժական նպատակների  
 համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր,  
 վիրակապման նյութեր. ատամնալցման և  
 ատամների ծեփապատճեններ պատրաստելու  
 նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու  
 կենդանիների ոչնչացման պատրաստուկներ.  
 ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս.  
 մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված,  
 չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր  
 և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ.  
 ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և  
 ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ,  
 տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ.  
 ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց,  
 հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ.  
 մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ.  
 աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք).  
 համեմունք. սառույց.

դաս 31. գյուղատնտեսական, այգեգոր-  
 ծական, անտառային և հացահատիկային  
 մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում.  
 կենդանիներ. թարմ մրգեր և բանջարեղեն.  
 սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ. կեր  
 կենդանիների համար. ածիկ.

դաս 32. գարեջուր. հանքային և գազա-  
 վորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ.  
 մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշա-  
 րակներ և ըմպելիքների պատրաստման այլ  
 բաղադրանյութեր:

(740) Ա. Գալոյան

(210) **20101804** (111) **17328**  
 (220) **10.12.2010** (151) **08.08.2011**  
 (181) **10.12.2020**

(730) Քալե Քիլիթ վե Քալիփ Սանայի Անոնիմ  
 Շիրքեթի, TR

(442) 23.02.2011

(540)



(591) Նշանը պահպանվում է սև, սպիտակ և  
 կարմիր գունային համակցությամբ:

(511)

դաս 6. մեխանիկական կողային փականքներ  
 և գլանաձև ներդրովի փականքներ՝ փայտից,  
 պողպատից, ալյումինից, պոլիվինիլքլորիդից և  
 ոչ պլաստիկացված պոլիվինիլքլորիդից դռների և  
 պատուհանների համար. կախովի փականքներ,  
 մետաղական մասեր դռների, պատուհան-  
 ների և կահույքի համար, այն է՝ մետաղական  
 բռնակներ դռների, պատուհանների, կահույքի  
 համար, փականքներ տարաշարժ դռների  
 համար, մղակներ, մետաղական ծխնիներ, հար-  
 մարանքներ դռները և պատուհանները բացելու  
 և փակելու համար, մետաղական մղակներ և  
 գլաններ պատուհանների համար:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20110131** (111) **17329**  
 (220) **10.02.2011** (151) **08.08.2011**  
 (181) **10.02.2021**

(730) «Արարատի գինու գործարան» ՍՊԸ,  
 Արարատի մարզ, գյուղ Արարատ, Ռաֆֆու  
 19, AM

(442) 18.03.2011



(540)



(526) Բացի «ՊԱՍԽԱԼՅՆՈՅԵ» (ռուս.) և «ԶԱՏԻԿԻ» բառերից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է կարմիր, երկնագույն, կապույտ, մոխրագույն, բաց վարդագույն, բաց շագանակագույն, աղյուսագույն, ոսկեգույն, սպիտակ, սև և կանաչ գունային համակցությամբ:

(511) դաս 33. գինի "Կագոր":

(210) 20110135 (111) 17330  
 (220) 10.02.2011 (151) 08.08.2011  
 (181) 10.02.2021

(730) Քեդրբերի Ալլենդ ԼԹԴ., ԼԵ  
 (442) 07.04.2011

(540) **HALLS BREATH OF FRESH AIR**

(511)

դաս 30. հրուշակեղեն, բացառությամբ բժշկական նպատակների համար նախատեսվածների, շաքարից պատրաստված հրուշակեղեն, ներառյալ ծամոն:

(740) Ալ. Նահապետյան

(210) 20110155 (111) 17331  
 (220) 15.02.2011 (151) 08.08.2011  
 (181) 15.02.2021

(730) «Սարմետ» ՍՊԸ, Երևան, Մաշտոցի պող. 15, բն. 50, ԱՄ

(442) 07.04.2011

(540)



(511)


դաս 21. կափարիչներ տարանների համար:

(210) 20110217 (111) 17332  
 (220) 28.02.2011 (151) 08.08.2011  
 (181) 28.02.2021

(730) Շիսեիդո Քամփնի, ԼԹԴ., ԵՊ

(442) 21.04.2011

(540)



(511)  
 դաս 21. սանրեր և սպունգներ. խոզանակներ (բացառությամբ ներկարարական վրձինների), պարագաներ կոսմետիկայի համար, ապակյա, հախճապակյա և ճենապակյա անոթներ:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20110218** (111) **17333**  
 (220) **28.02.2011** (151) **08.08.2011**  
 (181) **28.02.2021**  
 (730) Շիսեիդո Քամինի, ԼԹԴ., JP  
 (442) 21.04.2011  
 (540)

# SHISEIDO

(511)  
 դաս 3. օճառ, արդուզարդի պարագաներ, անուշաբույր նյութեր, օճանելիք, կոսմետիկական միջոցներ. պատրաստուկներ արևայրուքի համար. կոսմետիկական խնամքի պատրաստուկներ. լոզանքի պատրաստուկներ (կոսմետիկական). եթերային յուղեր. մաշկի խնամքի միջոցներ, մարմնի խնամքի միջոցներ, մազերի խնամքի միջոցներ, շպարի և դիմահարդարման միջոցներ.

դաս 21. սանրեր և սպունգներ. խոզանակներ (բացառությամբ ներկարարական վրձինների), պարագաներ կոսմետիկայի համար, ապակյա, հախճապակյա և ճենապակյա անոթներ:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20110365** (111) **17334**  
 (220) **21.03.2011** (151) **08.08.2011**  
 (181) **21.03.2021**  
 (730) «Սիմոնա ակվա» ՍՊԸ, Երևան, Զավարյան փող. 1Ա շենք, բն. 14, AM  
 (442) 21.04.2011  
 (540)

# SIMONA

(511)  
 դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) **20110366** (111) **17335**  
 (220) **21.03.2011** (151) **08.08.2011**  
 (181) **21.03.2021**  
 (730) «Սիմոնա ակվա» ՍՊԸ, Երևան, Զավարյան փող. 1Ա շենք, բն. 14, AM  
 (442) 21.04.2011  
 (540)

# SIMONA AQUA

(511)  
 դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) **20110370** (111) **17336**  
 (220) **22.03.2011** (151) **08.08.2011**  
 (181) **22.03.2021**  
 (730) «Կնյազյան ընդ փարթնրս» ՓԲԸ, Երևան, Վ. Համբարձումյան 16, բն. 52, AM  
 (442) 09.05.2011  
 (540)

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱՆԱՂ ՄՐՑՈՒՅԹ

(511)  
 դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում:

(210) **20110435** (111) **17337**  
 (220) **04.04.2011** (151) **08.08.2011**  
 (181) **04.04.2021**  
 (730) «Մարան» ՍՊԸ, Եղեգնաձոր, Աթարբեկյան 22, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



(526) «ՆՈՒՆ ՔԱՂՅՐ ԳԻՆԻ» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Նշանը պահպանվում է կարմիր, մուգ գինեգույն, սպիտակ և սև գունային համակցությամբ:

(511) դաս 33. նոան գինի:

(210) **20110446** (111) **17338**  
 (220) **05.04.2011** (151) **08.08.2011**  
 (181) **05.04.2021**

(730) «Գարանտ ըքստինթ քոնսալթինգ» ԱՊԸ, Արտաշիսյան 55/13, բն. 36, Երևան, AM  
 (442) 09.05.2011  
 (540)



(526) «ACCOUNT CONSULTING» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ կապույտ, սպիտակ և մոխրագույն գունային համակցությամբ:

(511) դաս 35. գործերի կառավարում գործարարության ասպարեզում, գրասենյակային ծառայություններ, հաշվապահական ծառայություններ.

դաս 45. իրավաբանական ծառայություններ:

(210) **20110458** (111) **17339**  
 (220) **11.04.2011** (151) **08.08.2011**  
 (181) **11.04.2021**

(730) «Ուոթերլոկ» ՍՊԸ, Երևան, Ֆուչիկի 27, AM  
 (442) 09.05.2011

(540)



(526) «APARAN» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է կապույտ, երկնագույն և սպիտակ գունային համակցությամբ:

(511) դաս 32. աղբյուրի ջուր:

(210) **20110460** (111) **17340**  
 (220) **11.04.2011** (151) **08.08.2011**  
 (181) **11.04.2021**

(730) «Հասարակության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Տերյան 62, բն. 6, AM

(442) 09.05.2011  
 (540)

**Любое сравнение в нашу пользу**  
**Ցանկացած համեմատությունը մեր օգտին է**

(511)

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խաճանյութեր, ներկանյութերի սևեռակայիչներ. չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ գեղարվեստական, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար.

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաքեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 9. գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ. էլեկտրականության հաղորդման, միացման, փոխակերպման, կուտակման, կարգավորման կամ վերահսկման սարքեր և գործիքներ. ծայնի կամ պատկերի գրառման, հաղորդման կամ վերարտադրման սարքեր. մագնիսական տեղեկակիրներ, ծայնագրման սկավառակներ. առևտրի ավտոմատներ և կանխավճարով աշխատող ապարատների մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ, հաշվիչ մեքենաներ, տեղեկատվության մշակման սարքավորումներ և համակարգիչներ. կրակամարիչներ.

դաս 11. լուսավորման, ջեռուցման, շոգուարտադրման, սննդամթերքի ջերմամշակման, սառեցման, չորացման, օդափոխման, ջրաբաշխման և սանիտարատեխնիկական սարքեր.

դաս 12. տրանսպորտային միջոցներ. ցամաքով, օդով կամ ջրով տեղաշարժվող ապարատներ.

դաս 25. հագուստ, կոշիկեր, գլխարկներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր.

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշորակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի).

դաս 36. ապահովագրություն. ֆինանսական գործունեություն. դրամավարկային գործառնություններ. անշարժ գույքի հետ կապված գործառնություններ.

դաս 38. հեռահաղորդակցություն:

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| (210) <b>20101190</b>   | (111) <b>17341</b>      |
| (220) <b>12.08.2010</b> | (151) <b>17.08.2011</b> |
|                         | (181) <b>12.08.2020</b> |

(730) Անհատ ձեռնարկատեր Միեր Միքայելյան, Երևան, Նորագյուղ, տուն 309, AM

(442) 06.09.2010

(540)



(526) «FRESH» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 32. գովազուցիչ ըմպելիքներ:

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| (210) <b>20101453</b>   | (111) <b>17342</b>      |
| (220) <b>15.10.2010</b> | (151) <b>17.08.2011</b> |
|                         | (181) <b>15.10.2020</b> |

(730) Օբջէստվո Ս Օգրանիչենոյ Օտվետսովեննոստյու «Ալմագ-Մ», RU

(442) 22.12.2010

(540)



BEAUTY CARE

(526) «BEAUTY CARE» արտահայտությունն  
ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ  
և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկ-  
ներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպա-  
զերծման և հղկամշակման համար. օճառներ.  
օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական  
միջոցներ, անձնական օգտագործման հոտա-  
զերծիչներ, շրթներկ, անուշաբույր ջուր, դուխի,  
լոսյոններ մազերի համար, մազերը ներկելու  
միջոցներ, լաքեր մազերի համար, լաքեր  
եղունգների համար, լոսյոններ կոսմետիկական  
նպատակների համար, օդեկոլոններ. ատամի  
փոշիներ և մածուկներ.

դաս 5. դեղագործական և անասնաբուժա-  
կան պատրաստուկներ. հիգիենիկ պատրաս-  
տուկներ բուժական նպատակների համար,  
ներառյալ կոսմետիկական պատրաստուկներ  
բուժական նպատակների համար. դիետիկ  
նյութեր բուժական նպատակների համար,  
մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրա-  
կապման նյութեր. ատամնալցման և ատամների  
ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախ-  
տահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների  
ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ,  
հերբիցիդներ.

դաս 21. տնային կամ խոհանոցային  
կահկարասի և սպասք (բացառությամբ  
ազնիվ մետաղներից պատրաստվածների  
կամ դրանցով պատվածների). սանրեր և  
սպունգներ. խոզանակներ (բացառությամբ  
վրձինների). նյութեր խոզանակային իրերի  
համար. սարքեր և հարմարանքներ մաքրման  
և հավաքման համար. մետաղական քերակներ  
հատակների համար (պողպատյա տաշեղ).  
չմշակված կամ մասնակի մշակված ապակի  
(բացառությամբ շինարարական ապակու).  
ապակյա, հախճապակյա և ճենապակյա իրեր,  
որոնք ընդգրկված չեն այլ դասերում:

(740) Ան. Նահապետյան

(210) **20101503** (111) **17343**  
(220) **22.10.2010** (151) **17.08.2011**  
(181) **22.10.2020**

(730) Փֆայգր Ա.Գ., CH  
(442) 07.12.2010

(540)

## АЛЬБОНАЛ

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժա-  
կան պատրաստուկներ. հիգիենիկ պատրաս-  
տուկներ բուժական նպատակների համար.  
դիետիկ նյութեր բուժական նպատակների  
համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր,  
վիրակապման նյութեր. ատամնալցման և  
ատամների ծեփապատճեններ պատրաստելու  
նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու  
կենդանիների ոչնչացման պատրաստուկներ.  
ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ան. Նահապետյան

(210) **20101680** (111) **17344**  
(220) **16.11.2010** (151) **17.08.2011**  
(181) **16.11.2020**

(730) Ալթիմըթ Բրենդ Մենիջմընթ, L.L.Ք, US  
(442) 07.02.2011

(310) 76/703,010 (320) 18.05.2010 (330) US  
(540)

## ULTIMATE MMA

(511)

դաս 25. հագուստ, կարած արտադրանք,  
գլխարկներ, կոշիկներ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20101704** (111) **17345**  
